

Գյումրու ՏԻՄ թեկնածուի Վարքականոն

Հաստատվել է Գյումրու հանրային խորհրդի 8-րդ նիստում,
26 սեպտեմբերի 2008

Ես՝ Գյումրու ավագանու անդամության / կամ քաղաքապետի թեկնածու,

Հաշվի առնելով,

Տեղական ինքնակառավարման մարմիններում իմ հավակնած պաշտոնի հանրային կարելությունը, ժողովրդավարական ընտրությունների միջոցով ընտրվելու հրամայականը, ընդունելով Գյումրի քաղաքի հավաքական շահի գերակայությունը, առաջնորդվելով մեր նախնիներից ժառանգած արժանապատվությամբ, կամավոր ընդունում եւ ճանաչում եմ այս վարքականոնի սկզբունքները եւ դրանցով առաջնորդվելու եմ ամբողջ ընտրապայքարի ընթացքում: Այս պարտավորությունը բոլոր հնարավոր դրվագներով տարածվում է նաեւ իմ նախընտրական թիմի յուրաքանչյուր անդամի վրա:

ՏԻՄ թեկնածուի Վարքականոնի սկզբունքներ.

1. ՏԻՄ քարոզարշավի ընթացքում ընտրողների դիրքորոշման վրա չազդել ընտրակաշառքով, այդ թվում՝ պաշտոնական առաջխաղացման եւ աշխատատեղերի անձնականացված խոստումներով, նյութական օժանդակությամբ, սննդամթերքի, դեղորայքի մատակարարմամբ, զանազան պարտքերի մարման խոստումներով եւ մարումներով, տնտեսական գործունեությանն առնչվող արտոնությունների եւ կենցաղային (բնակարան, ԲԳՎ, հողամաս, հերթացուցակային առաջխաղացում) բնույթի անձնականացված խոստումներով եւ համանման գործողություններով:
2. Քարոզչության շրջանակներում՝ ելույթներում, մրցակիցների հասցեին քննադատություններում պահպանել քաղաքավարության եւ պարկեշտության նորմերը, չգրպարտել, հրաժարվել չստուգված տեղեկությունների հրապարակումից:
3. Բոլոր հնարավոր պարագաներում եւ հանգամանքներում մրցակիցներին վերաբերվել հանդուրժողականությամբ եւ հարգանքով:
4. Թեկնածուի կոչումների եւ վկայագրերի մասին հիշատակելիս, նշել, թե ինչ հաստատությունների կողմից է շնորհվել, ինչ ճանաչում ունեն այդ կազմակերպությունները եւ կոչումները տվյալ ոլորտներում, եւ՝ ինչի համար են շնորհվել:
5. Հանրությանը նախկինում մատուցած ծառայությունները հիշատակելիս, կոնկրետ նշել, թե որտեղ, երբ, ինչ եղանակներով են արվել այդ ծառայությունները եւ որտեղից են հայթայթվել այդ միջոցները: Այս իրազեկումների մեջ հստակ տարանջատել ի պաշտոնե կատարած աշխատանքները ոչ ի պաշտոնե կատարածներից:
6. Ընտրապայքարում ծրագրային խոստումները սահմանել եւ իրազեկել ողջամիտ իրատեսության սահմաններում, չստել:
7. Նախընտրական ծրագրերը ներկայացնելիս, հնարավոր ճշգրտությամբ նշել ծրագրերի ոլորտները, թիրախները, փուլերը, իրականացման ժամկետները եւ ռեսուրսները. հանրային, մարդկային, նյութական, ֆինանսական, մասնագիտական, քաղաքական, մշակութային եւ իրավական:
8. Քարոզչական գործողություններում եւ աշխատանքներում չներգրավել անչափահասներին. քարոզչական նյութերի տարածում, նախընտրական հանդիպումների մասնակցություն, քարոզում եւ համանման գործողություններ:
9. Քարոզչության նպատակով, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, չօգտագործել հանրային միջոցներ, մասնավորաբար.
 - Չօգտագործել պետական, համայնքային սեփականությունը եւ թաղային կամ համատիրական սեփականությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
 - Չկազմալուծել համայնքային եւ պետական մարմինների, կրթական, առողջապահական հիմնարկների, արտակարգ իրավիճակների, սոցիալական, իրավապահ ծառայությունների աշխատանքը,
 - Աշխատանքային ժամերին համայնքային եւ պետական հիմնարկներում քարոզչություն չիրականացնել,
 - Չօգտագործել հասարակական կազմակերպությունների, ոչնախընտրական հիմնադրամների եւ դրանց տարատեսակ միավորումների ֆինանսական, դրամաշնորհային եւ ծառայողական միջոցները:
10. Չօգտագործել բնական մենաշնորհները սպասարկող ձեռնարկությունների (գազամատակարարման, ջրմուղի, հեռախոսակապի, էներգամատակարարման)

միջոցները, չկազմալուծել դրանց աշխատանքը եւ աշխատաժամին աշխատակիցներին չներգրավել քարոզչության մեջ:

11. Գովազդային նյութերում զուսպ լինել համայնքային եւ/կամ ազգային խորհրդանիշների օգտագործման դեպքերում, չչարաշահել դրանք եւ «չսեփականացնել»: Գովազդներում շեշտը դնել ոչ թե ազգային եւ/կամ համայնքային խորհրդանիշների վրա, այլ՝ սեփական ծրագրերի եւ գաղափարների:
12. Բացառել քարոզչական տեղեկատվության մանիպուլիացիաներից. չապատեղեկացնել ընտրողներին ընտրապայքարի դրվագների չափազանցմամբ, նենգափոխմամբ եւ/կամ խեղաթյուրմամբ:
13. Չբացառելով սույն վարքականոսի որեւէ դրույթի պատահական խախտումը, հանդես գալ տեղի ունեցած խախտման հանգամանքների բացատրությամբ եւ հանրության համար մեկնաբնել տեղի ունեցածը:
14. Ընտրվելու դեպքում, հանրությանը հաշվետու լինել բոլոր հնարավոր միջոցներով, այդ թվում պարբերական մամուլի ասուլիսներով, ընտրողների հետ անհատական եւ խմբային հանդիպումներով, կանոնակարգված ընդունելություններով, զանգվածային լրատվության միջոցներով, իր՝ որպես ավագանու անդամի, գործունեության մասին նախնական եւ հաջորդիվ իրազեկումներով: